Յոյժ մեղաւոր և եղկելի։
Ի ցոյցս մարդկան արեղայի,
Գործով զազիր և աղտեղի,
Շըրջիմ իբր թէ կենդանի,
Հոգիս մեռեալ ի մէջ մարմնի։
Զձեզ աղաչեմ եղբարք բարի,
Որք հանդիպիք յայսմ տառի,
Ցիչման առնէք զիս արժանի,
Ցիչեալ լիջիք յայնմ ատենի։
Վայ. Քզ. ճ. Զ. Մ. Ն. Ժ. Ո. Հ. Մ։ եղկելի»։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊՍ. ՄՇՈՑ.—Աշակերտ Եղեսացի Սրապիոն վրդ.ի (յետոյ կթղ. աթոռակից 1603-*1606 Ամիդի մէջ), Սրապիոն վրդ.ի հետ կանուխէն այցելած է Ս. Յակոբ և Տնօրինական տեղերը։ Կտակով Ս. Յակոբի վանքին կը նուիրէ 1598ին, Մեկնութիւն Թղթոցն Պողոսի ձեռագիրն որ իր ձեռքով ընդօրինակուած էր 1491ին, Բարձրահայեաց վանքին մէջ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊՍ. ՍԵԴՐԱԿԵԱՆ, ԳԱԼՖԱԼՈՒՑԻ (ՍՈՒՐՄԱԼՈՒ). Մբ. Ս. Էջմիածնի, Ծ. 1844ին, Զռ. 1865ին։ Յաջորդ Տաթեւի վանուց 1867-69, ուսուցիչ Գէորգեան ճեմարանի 1874ին, կառավարիչ Ղարապաղի 1876-81, եպս. 1882ին, Առ. Թիֆլիզի 1883-89. անդամ սինոդի և տեսուչ Գէորգեան ճեմարանի 1891-93, առ. Աստրախանի 1895, հրաւիրակ կուգայ Մկրտիչ Ա. Խրիմեան կթղ.ի Ս. Յակոբ վանք, ընկերակցութեամբ Սարգիս եպս. Տէր-Գասպարեանի և Եփրեմ Սուքիասեան՝ Մեսրոպ Տէր-Մովսէսեան վարդապետներուն հետ 1893ին. կը վախճանի 1906ին։ Ունի այլևայլ գրաւոր աշխատութիւններ, որոնց գլխաւորն է Պատկերազարդ Հայ Եկեղեցւոյ գիրքը։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊՍ. ԴԵՐՁԱԿԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, Մբ.—Աւագանի անունը Գրիգոր, Ծ. 1828, Զռ. 1852ին, կը հրաժարի Միաբանութենէն 1856ին, եպս. 1861ին, առ. Գաղատիոյ, 1867ին, առ. Տեղապահ Կարնոյ 1888-89. առ. Պաղտատի ուր կը վախճանի 1901ին։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ՎԱՆԵՑԻ. Մբ. — Ծ. 1852ին, Զռ. 1879ին. ՏՓ. 1881-85, ՏԴ. 1888-91, ՏՊ. 1891-1892, առ. Փոխ. Քղիի 1893ին, առ. Ակնայ 1900, առ. փոխ.